

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2018թ. մարտի 14-ի նիստի
Գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 53 -ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ընտրություններ:
 2. Գիտական կոչումների շնորհում:
 3. Համալսարանում զուգահեռ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու մասին:

Զեկ.՝ Մհեր Մելիք-Բախշյան
 4. Մագիստրատուրայում ուսանողների պրակտիկայի մասին:

Զեկ.՝ Վահան Սարգսյան
 5. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց նորընտիր գիտական խորհրդի անդամներին՝ մաղթելով արդյունավետ գործունեություն: Պարոն Միրզախանյանը ներկաներին առաջարկեց հաստատել նիստի օրակարգը, եթե նրանք այլ առաջարկություններ չունեն:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը երկարամյա աշխատանքի առթիվ պարգևատրեց համալսարանի նախկին գիտական քարտուղար Հասմիկ Պետրոսյանին <<Մանկավարժական համալսարան>> մեդալով:

Ծննդյան հոբելյանի առթիվ պարոն Միրզախանյանը շնորհավորեց համալսարանի երեք դասախոսների և նրանց շնորհեց դրամական պարգև:

Գիտական խորհրդի նախագահը շնորհավորեց նաև համալսարանի դասախոսներ Նարինե Բաբաջանյանին, Դավիթ Մոսիսյանին, Աննա Ադամյանին և Սիրինե Շողերյանին դոցենտի գիտական կոչում ստանալու կապակցությամբ և հաճնեց վկայագրերը:

Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանը ներկայացրեց Ռուբեն Սևակի կենսագրական, հասարակական գործունեության և գրական բարձր շերտերը քննող խոհագրությունների մրցույթի հաղթողներ ճանաչված երեք ուսանողների. 1-ին մրցանակին արժանացել էր Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Աննա Սարգսյանը, 2-րդ մրցանակին՝ Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողուհի Գոհար Ամալյանն և Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Աստղիկ Բոյաջյանը, իրախուսական մրցանակ տրվեց Համալսարանի հենակետային վարժարանի աշակերտուհի Միլենա Բարսեղյանին:

Լսեցին – Հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Աելիտա Դոլուխանյանի հաղորդումը Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի և Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի երկու դոցենտների ընտրության մասին:

Տիկին Դոլուխանյանը ներկայացրեց Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի թեկնածու, Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի գիտամանկավարժական գործունեությունը և Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի երկու թափուր պաշտոնի թեկնածու, Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնակատարներ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարգարիտ Ասատրյանի և մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նելլի Կարապետյանի գիտամանկավարժական գործունեությունը: Տիկին Դոլուխանյանն ասաց, որ հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովը որոշում է կայացրել գիտական խորհրդին ներկայացնել Վազգեն Համբարձումյանի թեկնածությունը՝ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրությանը մասնակցելու համար և Մարգարիտ Ասատրյանի և Նելլի Կարապետյանի թեկնածությունները՝ Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի երկու թափուր պաշտոնների ընտրությանը մասնակցելու համար:

Լսեցին – Մշակութային մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Գևորգ Թադևոսյանի հաղորդումը Կերպարվեստի ամբիոնի վարիչի ընտրության մասին:

Պարոն Թադևոսյանը ներկայացրեց Կերպարվեստի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի թեկնածու, ՀՀ նկարիչների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարան Աղամյանի ստեղծագործական և գիտամանկավարժական գործունեությունը: Պարոն Թադևոսյանը ներկայացրեց մշակութային մասնագիտությունների գծով հանձնաժողովի դրական կարծիքը՝ Կարեն Աղամյանի թեկնածությունը Կերպարվեստի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրությանը մասնակցելու համար:

Որոշեցին – Վազգեն Համբարձումյանի, Կարեն Աղամյանի, Մարգարիտ Ասատրյանի և Նելլի Կարապետյանի թեկնածությունները դնել փակ գաղտնի քվեարկության:

Լսեցին – Գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը համալսարանի ինը դասախոսների գիտական կոչումներ շնորհելու մասին:(Կից՝ տես ցուցակը):

Որոշեցին – Համալսարանի դասախոսներ Արա Հակոբյանի, Կամո Վարդանյանի, Լուսինե Ղուլդազարյանի, Ալվարդ Գրիգորյանի, Գայանե Ծատուրյանի, Էդուարդ Մելքոնյանի, Սուսաննա Սուրադյանի, Լիլիթ Սարվազյանի, և Սեյրան Շահսուվարյանի թեկնածությունները դնել գաղտնի քվեարկության:

Լսեցին – Ձայներ հաշվող հանձնաժողովի ընտրության մասին:

Որոշեցին – Ստեղծել ձայներ հաշվող հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Աշոտ Գալստյան- նախագահ
2. Ներսիկ Մարգարյան
3. Լիլիթ Հարությունյան
4. Ժենյա Պետրոսյան
5. Արմեն Շառյան

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Գալստյանի հաղորդումը ամբիոնների վարիչների և դոցենտների պաշտոնների ընտրության քվեարկության արդյունքների մասին: Քվեարկության արդյունքներն են.

Կարեն Աղամյան (Կերպարվեստի ամբիոնի վարիչի պաշտոնի համար) - 52 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Վազգեն Համբարձումյան (Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնի համար) - 49 կողմ, 2 դեմ, 2 անվավեր քվեաթերթ

Մարգարիտ Ասատրյան (Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնի համար) - 50 կողմ, 2 դեմ, 1 անվավեր քվեաթերթ

Նելլի Կարապետյան (Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնի համար) - 52 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

1. Որոշեցին –

Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գուրգենի Աղամյանին համարել ընտրված Կերպարվեստի ամբիոնի վարիչի պաշտոնում, Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Գուրգենի Համբարձումյանին համարել ընտրված Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում, Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարգարիտ Ասքանազի Ասատրյանին համարել ընտրված Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնում, Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նելլի Զավենի Կարապետյանին համարել ընտրված Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Գալստյանի հաղորդումը գիտական կոչումների շնորհման քվեարկության արդյունքների մասին:

Արա Հակոբյան (պրոֆեսորի կոչման համար) – 53 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Կամո Վարդանյան (պրոֆեսորի կոչման համար) – 51 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Լուսինե Ղուլղազարյան (պրոֆեսորի կոչման համար) – 50 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Ալվարդ Գրիգորյան (դոցենտի կոչման համար) – 53 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Գայանե Ծատուրյան (դոցենտի կոչման համար) – 52 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Էդուարդ Մելքոնյան (դոցենտի կոչման համար) – 53 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Սուսաննա Մուրադյան (դոցենտի կոչման համար) – 52 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Լիլիթ Սարվազյան (դոցենտի կոչման համար) – 52 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

2. Որոշեցին –

Համաձայն գաղտնի քվեարկության Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության դոկտոր, դոցենտ Արա Հրավարդի Հակոբյանին <<Արվեստագիտություն>> մասնագիտության գծով շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (6գ) կետի, Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Կամո Երեմի Վարդանյանին <<Հոգեբանություն>> մասնագիտության գծով շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (6ա) կետի, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, դոցենտ Լուսինե Գուրգենի Ղուլղազարյանին <<Մաթեմատիկա>> մասնագիտության գծով շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (6ա) կետի, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Ալվարդ Ֆիլիպի Գրիգորյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (5բ) կետի, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Գայանե Համլետի Ծատուրյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (5բ) կետի, Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Էդուարդ Վոլոդյայի Մելքոնյանին <<Հայոց պատմություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (5բ) կետի, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Սուսաննա Վալերիի Մուրադյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (5բ) կետի, Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի ասիստենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լիլիթ Սերոժի Սարվազյանին <<Փիլիսոփայություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (5բ) կետի, Ռեժիսուրայի ամբիոնի դոցենտի

պաշտոնակատար Մեյրան Նիկոլայի Շահումյարյանին <<Թատերական արվեստ.կինոարվեստ, հեռուստատեսություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի (5դ) կետի, և դիմել ՀՀ ԲՈՀ այդ որոշումը հաստատելու խնդրանքով:

Լսեցին - Համալսարանում զուգահեռ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու մասին:(Զեկ.՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյանը գիտական խորհրդի անդամների քննարկմանը ներկայացրեց Համալսարանում զուգահեռ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընթացակարգը: Նա ասաց, որ ամբիոններն ու ֆակուլտետները նախապես ստացել են ընթացակարգի նախագիծը: Նրանց կողմից եղել են առաջարկներ և լրացումներ: Պարոն Մելիք-Բախշյանը նկատեց, որ նախկինում ևս բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու մասին օրենքով կրթության առկա և այլ ձևերի զուգակցումը չէր արգելվում, սակայն այս ընթացակարգով սահմանվում է դրա ընդհանուր պայմանները: Զուգահեռ ուսուցմամբ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար դիմած անձը համապատասխան կրեդիտների առկայության դեպքում ազատվում է իր նախորդ կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրած և տվյալ կրթական ծրագրում առկա առարկաներից, ինչպես նաև պարտավորվում է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է:

3. Որոշեցին - Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական Համալսարանում զուգահեռ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընթացակարգը:(Կից՝ տես ընթացակարգը):

Լսեցին - Մագիստրատուրայում ուսանողների պրակտիկայի մասին:(Զեկ. Վահան Սարգսյան) Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը ներկայացրեց պրակտիկայի կազմակերպման արդյունքները, պրակտիկայի բարելավմանն ուղղված քայլերը, առաջարկությունները:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը կարևորեց մագիստրատուրայում պրակտիկայի կազմակերպման վերանայումը, քանի որ այն գտնվում է ոչ բավարար վիճակում:

4. Որոշեցին –

1. Մագիստրոսական պրակտիկայի կազմակերպման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել.

ա) մագիստրոսական կրթական ծրագրերով սովորողների մասնագիտական պրակտիկաները կազմակերպող ամբիոնների վարիչներին՝ մինչև սույն թվականի մայիսի 15-ը վերանայել 2018-2019 ուսումնական տարում մագիստրոսական պրակտիկայի առարկայական նկարագրերը,

բ) ֆակուլտետների ղեկանների՝ մինչև սույն թվականի ապրիլի 15-ը ներկայացնել իրենց ֆակուլտետներին վերապահված մասնագիտությունների 2018-2019 ուսումնական տարում մագիստրոսական պրակտիկայի ամփոփիչ սեմինարների կազմակերպման ծրագրերը և ժամանակացույցը:

գ) համալսարանի պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին և իրավաբանական կենտրոնի ղեկավար Արմեն Ֆերոյանին՝ մինչև 2018-2019 ուսումնական տարվա սկիզբը ապահովել մագիստրոսական կրթական ծրագրերով սովորողների համար պրակտիկայի կազմակերպման հիմնարկների հետ համապատասխան պայմանագրերի կնքումը,

դ) ֆակուլտետների գիտության և միջազգային համագործակցության գծով ղեկանների տեղակալներին՝ իրականացնել մագիստրոսական պրակտիկայի կազմակերպման գործընթացի պատշաճ համակարգում և հսկողություն:

Ընթացիկ հարցեր.

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Նաիրա Տոդանյանի <<Հայ գրականության դասավանդման մեթոդիկա>> ուսումնամեթոդական ձեռնարկը և Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Ներսես Սամվելյանի <<Մայրցամաքների և համաշխարհային օվկիանոսի ֆիզիկական աշխարհագրություն> ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

5. Որոշեցին - Նշված ձեռնարկները երաշխավորել հրատարակության:

Լսեցին - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Սոցիալական մանկավարժություն>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Միշա Վարուժանի Թադևոսյանին <<Խաչատուր Աբովյան>> անվանական կրթաթոշակի ներկայացնելու մասին: (Զեկ.՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյան):

6.Որոշեցին - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Սոցիալական մանկավարժություն>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Միշա Վարուժանի Թադևոսյանին նշանակել <<Խաչատուր Աբովյան>> անվանական կրթաթոշակ:

Լսեցին - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի <<Սոցիալական մանկավարժություն>> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Անժելա Գաբրիելի Գաբրիելյանին <<Բորիս Անանև>> անվանական կրթաթոշակի ներկայացնելու մասին: (Զեկ.՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյան):

7.Որոշեցին - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի <<Սոցիալական մանկավարժություն>> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Անժելա Գաբրիելի Գաբրիելյանին նշանակել <<Բորիս Անանև>> անվանական կրթաթոշակ:

Լսեցին- Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Քիմիա>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Մերուժանի Ղալեյանին <<Ն.Ս.Ենիկոլոպովի>> անվանական կրթաթոշակի ներկայացնելու մասին: (Զեկ.՝ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյան):

8. Որոշեցին -Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Քիմիա>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Մերուժանի Ղալեյանին նշանակել <<Ն.Ս.Ենիկոլոպովի>> անվանական կրթաթոշակ:

Լսեցին - Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Կենսաբանություն>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Էլյա Արմենի Խաչատրյանին <<Լևոն Օրբելի>> անվանական կրթաթոշակի ներկայացնելու մասին: (Զեկ.՝ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյան):

9. Որոշեցին - Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Կենսաբանություն>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Էլյա Արմենի Խաչատրյանին նշանակել <<Լևոն Օրբելի>> անվանական կրթաթոշակ:

Լսեցին - Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Ֆիզիկա>> մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Նարինե Մամիկոնի Քալանթարյանին <<Անանիա Շիրակացի>> անվանական կրթաթոշակի ներկայացնելու մասին: (Զեկ.՝ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան Գագիկ Դեմիրխանյան):

10. Որոշեցին -Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Ֆիզիկա>> մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Նարինե Մամիկոնի Քալանթարյանին նշանակել <<Անանիա Շիրակացի>> անվանական կրթաթոշակ:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ